ԳԱԳԻԿ ԽԱՉԻԿՅԱՆ, բ.գ.դ., դոցենտ,
ԱՆԱՀԻՏ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ, բ.գ.թ., դոցենտ
Շիրակի պետական համալսարան,
հայոց լեզվի և գրականության ամբիոն

ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ՄԱՐԴԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԱՆՅԱՆԻ «ԶԻՆԱԴԱԴԱՐ» ՎԻՊԱԿԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ[1*]

Հովհաննես Երանյանը «Զինադադար»/2005/ ժողովածուի մեջ զետեղված պատմվածքներում և նույնանուն վիպակում պատկերել է անկախության առաջին տարիներին (1990-ական թվականներ) Հայաստանի Հանրապետությունում ստեղծված իրավիճակը: Իր ստեղծած կերպարների և հատկապես գլխավոր հերոսի միջոցով գեղարվեստական միջավայրի համապատկերում գրողը ներկայացրել է Արցախի ազատագրված տարածքի մի հատվածում զինադադարի ժամանակաշրջանի ու երկրում ստեղծված կացության ճշմարտացի, տիպական մի շարք կողմեր: Պատմական ժամանակն ու տարածությունը /այլ կերպ ասած՝ քրոնոտոպը/ յուրովի են պայմանավորում վիպակի հերոսների բնավորությունների և կենսակերպի ինքնատիպ դրսևորումները:

Վիպակում պատկերված ֆաբուլան հիմնականում զարգանում է թուրք-ադրբեջանցիների դեմ Արցախյան առաջին պատերազմում հայության տարած հաղթանակի և հարաբերական զինադադարի շրջանի տիրույթում: Հեղինակը յուրովի, իսկապես գեղարվեստորեն թափանցիկ պատկերներով ստեղծված պատումի, չխճողված իրադարձությունների շրջանակում ներկայացնում է պատերազմի թողած հետքերը և երկրի կյանքի, մարդկանց, հատկապես ռազմական գործողությունների մասնակիցների և պարզապես խաղաղ բնակչության, անհատի հոգեբանության վրա: Հերոսները զգում և գիտակցում են, որ պատերազմի մասնակցի համար այն չի ավարտվում զինադադարից հետո անգամ: Հեղինակը կարևորում է Արցախյան պատերազմի ու նրա հետևանքների, ազատագրված տարածքների յուրացման ու բնակեցման հետ կապված թեմաներն արծարծել իր հերոսների ճակատագրերի անսքող բացահայտումների միջոցով:

1* Ընդունվել է տպագրության 05.04. 2022 թ.

Գրողի ստեղծագործական հավատամքին մեր կարծիքով բնորոշ է ընդհանուր առմամբ իրատեսության՝ ռեալիզմի սկզբունքներով պատկերելու նախասիրությունը: Համենայն դեպս նկատելի է, որ արձակագիրն իր կենսականորեն համոզիչ պատկերամտածողությամբ առաջնորդվում է առավելապես մարդկային հարաբերությունները պատճառահետևանքային կապերով պայմանավորված նկարագրելու ստեղծագործական մեթոդին բնորոշ դիտանյունով: Տեսանելի է իրադարձությունների, տեղավայրերի ճշգրտությունը մարդկային հարաբերությունների, վիպակի հերոսների արարքների իրական, կենսական պահանջների թելադրանքով կատարվելու հանգամանքը գրողի կողմից ընդգծելու հետևողականությունը: Այլ կերպ ասած՝ իրականությունը իրատեսական մոտեցումներով պատկերելու եղանակը գերակայում է վիպակում տեղի ունեցող իրադարձություններում, թեև չի բացառվում, որ գրական հնարքները ևս դերակատարություն ունեն նրա մտահղացումների մեջ: Ասենք ավելին. գլխավոր կերպարն իբրև պատմող-նարատոր կիրառելու եղանակը հեղինակին հնարավորություն է տվել նրա բնավորությունն ու ներաշխարհը բացահայտել ներքին ձևի բաղադրիչների՝ գիտակցության հոսքի, ինքնավերլուծության միջոցով ևս: Գեղարվեստական այսպիսի ստեղծագործական եղանակներ կիրառելու շնորհիվ գլխավոր հերոս Միեր Եփրեմյանը ընթերցողին ներկայանում է գրավիչ անկեղծությամբ, ներանձնական, կենսահոգեբանական զգացողություններով ու հասարակական լայն հետաքրքրություններով: Վիպակն արդեն ուշագրավ է դառնում նրանով, որ հեղինակը մեր գրականության մեջ շարունակում է բերել Արցախի ազատագրված տարածքն իբրև գեղարվեստական պատկերման միջավայր:

Ժամանակաշրջանի՝ անկախության տարիների իրականության, աշխարհագրական տարածքի, մարդկային բնավորությունների հայտնաբերման տեսանկյունից ամենևին էլ պատահական չէ, որ նույնիսկ վիպակի բնաբանով հեղինակը ճշգրտել է նրանում գործողությունների կատարման տարածաշրջանի աշխարհագրական հայկական անվանման՝ բառարանով վկայակոչված տեղավայրը. «Կովսական: Գավառ Մեծ Հայքի Սյունիք աշխարհում: Առաջին անգամ հիշատակվում է «Աշխարհացույցում» ՝ 7-րդ դար: Ստեփանոս Օրբելյանն օգտագործում է Կովսական և Կուսական ձևերը: Գտնվում է Ծավ գետի ավազանում և Ողջի գետի հովտում: Կովսականի հարավ-արևելյան սահմանն անցնում է Արաքս գետով:

«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բացատրական բառարան», Երևան, 1988»[1]:

1 Մեջբերումն ըստ Երանյան Հ., Զինադադար, պատմվածքներ, վիպակ, Երևան, ՀԳՄ հրատ., 2005, էջ 52:

Նման ճշգրտությունը, գրողի մտածողության շրջանակում միահյուսվելով գեղարվեստական պատկերաստեղծման սկզբունքներին, տեսանելի է դարձնում կենսական այնպիսի ճշմարտություններ, որոնց հետ բախվել էր նրա վիպակի գլխավոր կերպարը՝ Մոսկվայում սովորելիս, այնուհետև Երևանում օպերատոր, Արցախյան պատերազմի մասին վավերագրական ու զանազան հովանավորների պատվերով ֆիլմ նկարահանելիս և Արցախի ազատագրված տարածքներից մեկում՝ պայմանականորեն անվանված Մթնաձոր գյուղում ապրելիս ու աշխատելիս: Վիպակը նկարագրված իրադարձություններին մասնակցի կողմից գրված ստեղծագործություն է, քանի որ թվում է, գլխավոր հերոս Միերը հեղինակային ընկալումների, զգացածի, դեպքերին մասնակցածի դիտանկյունով է պատկերում կատարվող իրադարձությունները: Իսկ իբրև պատմող-նարատոր հանդես գալու գրական հնարքը, որի անունից հյուսվում է վիպակի ողջ պատումը, ավելի անմիջականորեն ընկալելի ու տեսանելի է դարձնում կատարվածը, ավելի հավաստի ու ֆիզիկապես անգամ զգացվող տեղի ունեցած դեպքերը: Գրողը համենայն դեպս հասել է իրականությունն այդպիսի մակարդակով պատկերելու վարպետությանը: Իսկ այն, ինչ պատկերված է վիպակում, իսկապես տպավորիչ է, յուրատիպ և բացահայտում է Արցախյան առաջին պատերազմի ու զինադադարի ժամանակաշրջանում տեղի ունեցած մի շարք իրողություններ, որոնց գեղարվեստական պատկերումն ունի արդի հայ գրականության մեջ անուրանալի առանձնահատուկ ճանաչողական նշանակություն: Մեր ընկալմամբ այն հեղինակի այլ երկերի հետ դառնում է անկախության առաջին տարիների մասին ստեղծված մի շարք կողմերով ինքնօրինակ հայ արձակի գեղարվեստական կարևոր ձեռքբերումներից մեկը Լևոն Խեչոյանի, մասնավորապես, նրա «Սև գիրք, ծանր բզեզ» վեպի և այլ արձակագիրների հաջողված երկերի կողքին:

Վիպակում հեղինակը գեղարվեստական, նույնիսկ հրապարակախոսական ուղղամտությամբ բացահայտում է այնպիսի իրողություններ, որոնց մասին պատերազմից հետո են ընթերցողների լայն շրջանակներում իմացել: Ընդհանուր առմամբ, գրողի ստեղծած պատումի թերևս գլխավոր արժանիքը պատերազմի և զինադադարի շրջանում գլխավոր հերոսի կենսափորձի միջոցով Ռուսաստանի Դաշնության և անկախացած Հայաստանի Հանրապետության մեջ կենսական ճշմարտության մի շարք կողմեր բացախոսությամբ ներկայացնելու հեղինակային նախասիրությունն է: Վիպակի կառուցվածքային և դիպաշարի պատկերման առումով իրադարձությունները սկսվում են այն շրջանում, երբ գլխավոր

հերոսն արդեն Արցախի ազատագրված սարերում ու անտառների մեջ կորած աննշան մի գյուղում է և վկա է դառնում իր և մյուսների, հատկապես Սփյուռքից ազատամարտին մասնակցելու եկած Դարբնիկի կողմից գյուղը վերականգնելու ջանքերին: Ականատես է դառնում կեղծ «ազատամարտիկների» կողմից բնակավայրն ու անտառը թալանելու մղումներին, համարձակ ու համառ Դարբնիկի կողմից նրանց ապօրինի ոտնձգություններին դիմակայելու հաստատակամությանը:

Գլխավոր հերոս Միերը Մոսկվայում ուսանելիս կինոմատոգրաֆիայի ասպարեզի մասնագետ դառնալու ճանապարհին ուղղակիորեն շփվում է ավանդական բարոյական արժեքների համեմատ այն բարձիթողի վիճակի հետ, որը դրսևորվում է Ռուսաստանի Դաշնությունում ռուսական նոր իրականությանը բնորոշ կենցաղային կենսադրվագներում: Դրանց մասին նա վերհիշում է հայրենիք վերադառնալու և Արցախյան պատերազմի մեջ հայտնվելու նախապատմությունը ներկայացնելու կապակցությամբ: Ուշագրավ գեղարվեստական ու կենսական բացահայտումներ են դառնում մոսկովյան արվեստագետների, ուսանողների շրջանում սեռական սանձարձակությունների տարածվածության փաստերը և դրանց մեջ հայտնված Միերի՝ իր կենսափորձի վրա հենվելով կատարած ընդհանրացումները: «Մղձավանջ էր թվում, - պատմում է նա,- անհնար մի երազ, որ կարող էի սեռական կապի մեջ մտնել մի սենյակում, ուր էլի մի քանի զույգ նույն գործով են զբաղված: Այդ օրերին Մոսկվայում ժամ առ ժամ շատանում էին համասեռամոլ արվեստագետները: Հասարակությունն ու օրենքները նրանց մերժում էին, սակայն կինոյի, թատրոնի մարդկանց ու մանավանդ երաժիշտների շրջանում սեռական շեղումներ ունեցողները հատուկ հարգանք էին վայելում, սեռական անոնրմալությունը տաղանդի չափանիշ էր դարձել: Նորանոր տաղանդավոր երկնագույններ ու արվամոլներ էին բացահայտվում, ովքեր մինչ այդ խորհրդային օրինապահ, ընտանեսեր, բարոյական ամուր կոփվածքի համբավ ունեին: Սեռական կիսամոլագար պահվածքով մեր ընկերական խումբն իբր ըմբոստանում էր դրա դեմ: Ասես մրցույթի էինք դուրս եկել: Ինձ հատկապես գրավում էին ամուսնացած կանայք: Մի առանձին վայելք էի զգում ամուսինների ձեռքից նրանց խլելով, և որքան բարձր էր ամուսնու պաշտոնն ու փուչ հեղինակությունը, որքան մեծ էր ապագաս խորտակելու վտանգը, այնքան ջանադրորեն ու մեծ կրքով էի ես լծվում նրանց կանանց մեղքի մեջ գցելու գործին: Մի քանի ընտանիք էի հասցրել քայքայել: Խաբված ամուսիններից մեկը քիչ մնաց խորտակեր կյանքս: Գաղտնի

կապս իրենց կանանց հետ նրանք բացահայտում էին ոչ իմ անզգուշության, այլ դիտավորությանս պատճառով»[1]:

Ուշագրավ է նաև մի այլ բացահայտում, որ ոչ պակաս իրատեսական ընդհանրացման տեղիք է տվել Միերին: Կենցաղային, սեռական նման ազատությունն ու սանձարձակությունը յուրովի «կարգավորում» էին մշակութային կյանքի որոշ կողմեր, այդպես տարերայնորեն էին տեղի ունենում անարժան մարդկանց արվեստի բնագավառում, ինչպես նաև հասարակական ու պետական պաշտոններում նշանակելու գործընթացները: «Երբեմն ինձ թվում էր, - գլխավոր կերպարի մտորումների ձևով գրում է հեղինակը, - թե երկիրը սիրուհիների ձեռքն է: Երկրի գաղափարական տաբուները փշուր-փշուր էին լինում տռփանքի, նույնիսկ ֆլիրտի հեռանկարի առջև: Կանայք, մանավանդ գեղեցիկ, բանիմաց, արվեստասեր կինը՝ ամուսնացած կամ միայնակ, կարող էր մշակույթը կառավարող գրասենյակների ու չինովնիկական բանակի համակրանքը վերածել ատելության, կամ հակառակը՝ հակախորհրդային ստեղծագործությունը մեկ գիշերվա ընթացքում դարձնել պետական մրցանակի հավակնորդ: Բացի Լոբինայից, ես ճանաչում էի այդպիսի մի քանի կանանց ևս, բայց նրանց ծառայությունից չէի ուզում օգտվել»[2]:

Խորհրդային Միության գոյատևման վերջին տարիներին Մոսկվայում ստեղծված նման միջավայրից Միերին դուրս է բերում Հայաստանից այստեղ ուսանելու եկած ուսանողուհի Մարիամը: Ազգային ավանդույթների թե՛ բանական և թե՛ բնազդային ազդակները իրենց որոշակի դերակատարությունն են ունենում կյանքում, այս դեպքում օտար միջավայրում կողմնորոշվելու գործընթացում: Եվ ահա աղջկա հետ ծանոթությունն ու շփումները բարերար ազդեցություն են ունենում Միերի վրա, և նրանք որոշում են ամուսնանալ: Մարիամի ազդեցության բարոյական նշանակությունը Միերը բացատրում է հետևյալ կերպ. «Մարիամն ինձ վերածնում էր, նրա անօգնականությունն ինձ օր օրի մաքրում էր: Պետք էր արագ հեռանալ, հեռու փախչել մեղքի այդ լաբիրինթոսից, և Մարիամը վզովս ընկավ ուրախությունից, երբ ասացի, թե ցանկանում եմ հայրենիք վերադառնալ»[3]:

Արցախյան առաջին պատերազմի, արդեն իսկ առաջին տարիներին, թիկունքում, այսինքն՝ նորանկախ Հայաստանում ստեղծված խառնաշփոթ վիճակի վերաբերյալ մեր պատկերացումները ևս ուրույն իրատեսությամբ է հարստացնում հեղինակն իր հերոսի ճակատագրով: Պարզ-

1 Նույն տեղում, էջ 77-78:
2 Նույն տեղում, էջ 78:
3 Նույն տեղում:

վում է, որ ընթացող հայ-ադրբեջանական թեժ հակամարտության իրադարձությունների շրջանում, ռազմաճակատի առաջին գծի մարտերից վախեցած ու փախած որոշ նույնիսկ բարձրաստիճան զինվորականներ իրենց երկչոտությունը թաքցնելու և իբրև «պատերազմի հերոս» հանրությանը ներկայանալու համար Միերին առաջարկել են իրենց չկատարած խիզախ արարքների վերաբերյալ վավերագրական ֆիլմեր նկարահանել և ցուցադրել հեռուստաեթերով:

«Առաջին կրակոցների հետ, - պատմում է Միերը, - ինձ առաջարկվեց որպես հեռուստաօպերատոր նկարահանել սկսվող պատերազմը: Սկզբում հրաժարվեցի, բայց երբ մի քանի հարուստ հովանավորներ հայտնվեցին և պատկառելի հոնորար խոստացան, ես սկսեցի նկարահանումները: Բայց ես պատերազմը չէի նկարահանում, այլ ինքնակոչ հրամանատարներին, որոնք մեկ-երկու օր ճակատում լինելով, վառոդի հոտից սարսափած հետ էին վերադարձել: Ես սարքովի արշավանքներ էի նկարահանում. ջոկատը լեռ է բարձրանում, ջոկատը պաշարման մեջ է, հրամանատարը վիրավորվում է, բայց չի լքում մարտադաշտը...: Իմ նկարահանած թատերական պատերազմը օրնիբուն ցուցադրվում էր հեռուստատեսությամբ՝ պատիվ ու հեղինակություն բերելով ինքնակոչներին»[1]:

Չցանկանալով շարունակել նման կեղծիք նկարահանել դասալիք դարձած վախկոտ զինվորական հրամանատարների մասին՝ գլխավոր հերոսը լավագույն ելքը գտնում է որպես կամավոր ռազմաճակատ գնալու ճանապարհով հեռանալ այդպիսի մարդկանց շրջապատից: Նա վստահ էր, որ ռազմաճակատից փախած այդ սարսափահար, սակայն կեղծ հերոս ձևացող զինվորականները, վստահաբար, իր հետևից չէին գնա և իսկական պատերազմի թեժ գոտում չէին հայտնվի: Այս իրադրության մեջ ևս հեղինակը յուրովի անկեղծ է ուզում լինել ընթերցողի հետ՝ տեսանելի դարձնելով պատերազմի գոտի գնալու իր տարբեր դրդապատճառներն ու հոգեվիճակը: Միերի՝ այս նոր իրադրությամբ պայմանավորված մտածելակերպը, ինչ խոսք, կերպարի անհատական ընկալումներն ու ինքնատիպությունն ավելի են արտահայտիչ դարձնում: Անթաքույց մտորումները նրան կապում են նաև պատերազմը պատումի շրջանակում ընկալող ընթերցողի սուբյեկտիվ զգացողությունների հետ: Ուստի կերպարը դառնում է ավելի ու ավելի հետաքրքիր, կյանքի ու պատերազմի մասին նրա ճանաչողությունը անհատական զգացողությունների տիրույթում ավելի են տեսանելի դարձնում նրա մարդկային, զգայական ներաշխարհի որոշակիությունը, հոգեբանական համոզչականությունը: «Երբ

1 Նույն տեղում, էջ 83:

նորից ճակատ մեկնեցի, և ի տարբերություն հարևաններիս կարծիքի, թե քաջ եմ, ես գիտեի, որ իրականում փախչում եմ, որովհետև ավելի հեշտ էր մահվան կողքին լինել, քան՝ խելագարության»[1]:

Վիպակում հիմնականում պատկերվում են պատերազմն ավարտվելուց հետո տեղի ունեցած զինադադարի շրջանի դեպքեր, հարաբերություններ, զգացողություններ, մտորումներ կատարվածի և նոր իրադրության վերաբերյալ: Այս տեսանկյունից ուշագրավ է հետևյալը, որ հայկական կողմը թեև հաղթանակ էր տարել Ադրբեջանի Հանրապետության ռազմական ուժերի դեմ, սակայն հեղինակն ակնհայտորեն ժամանակաշրջանի ընդհանուր պատկերն ստեղծելիս կարևորում է այդ շրջանում, ոչ այնքան հաղթանակի բերկրանքը գեղարվեստորեն արտահայտելը, որքան ջանացել է ցույց տալ նորանկախացած Հայաստանի Հանրապետությունում և Արցախի ազատագրված տարածքներում ստեղծված ծանր, խճճված իրավիճակի նկարագրությունը և այդտեղ ապրող մարդկանց կացությունը: Հանրային կյանքի բարդությունն ու դրա զգալիորեն քաոսային, տարերային բնույթը Երևանում բնութագրվում է հետևյալ կերպ. «Մայրաքաղաքում հակահիշխանական բուռն ցույցեր էին ընթանում: Ցուցարարները բողոքում էին ընտրակեղծիքների դեմ, ժողովրդի չքավոր վիճակի, բռնությունների դեմ: Նաև ազատագրված տարածքները, իբր հակառակորդին զիջելու պատրաստակամության դեմ»[2]:

Գրողն իր գլխավոր հերոսի և մյուսների ճակատագրով, հոգեվիճակով ու ապրելակերպով ձգտում է ներկայացնել զինադադարի շրջանում պատերազմի թողած աղետալի հետևանքները: Դրանք նա պատկերում է՝ անտառում կորած ադրբեջանցիներից ազատագրված գյուղում նոր իրադրությանը հարմարվելով ապրողների կյանքով ու գոյակերպով: Անառարկելի է, որ պատերազմը ծանր հետևանքներ է թողել մարդկանց մարմիններում և հոգիներում: Բայց և այնպես պատերազմի մեջ կյանքի ու մահվան սահմանագծին հայտնված ու ողջ մնացածները, մասնավորապես Դարբնիկը, Միերը կարողացել են իրենց մեջ ուժ գտնել և ուրիշ տեղափոխվածների հետ այս գյուղում ձեռնարկել վերականգնողական աշխատանքներ: Միերի գործուն շրջահայացությամբ ֆիննական տնակներ են բերում, դպրոց են ստեղծում, պատահաբար հայտնաբերում են պատմական խոր անցյալում ստեղծված քաղաքակրթության հետքեր, դամբարանադաշտ, որը պեղելու համար հրավիրում են մասնագետների:

Կերպարների մեջ առանձնանում է, իհարկե, Միերը, որ վիպակի ողջ

1Նույն տեղում, էջ 79:
2 Նույն տեղում, էջ 109:

պատումը ներկայացնում է իր անունից: Ակներև է, որ նա իդեալականացված հատկանիշներ ունեցող գրական կերպար կամ գլխավոր հերոս չէ: Կյանքը նրան սովորեցրել էր իրատես լինել: Ընդունել իրականությունը այնպես, ինչպես որ այն կա, առանց գունազարդելու, այդպիսի պայմաններում փորձել սեփական ուժերի ու ընդունակությունների չափով օգտակար լինել իր շրջապատի մարդկանց: Մի շարք կենսական խնդիրներում Միերը հանդես է բերում ուրույն սկզբունքայնություն. նա անտարբեր չէ իր շուրջը կատարվող իրադարձությունների ու անարդարությունների հանդեպ: Այդ մասին է վկայում նաև այն, որ ուսանողական տարիներին Մոսկվայում, հետաքրքիր, ինչ-որ չափով կիսազավեշտական հետևողականությամբ բարձր պաշտոններ ունեցող որոշ անարժան մարդկանցից վրեժ լուծելու համար գայթակղում և կենակցում է նրանց կանանց հետ, այսպիսի պահվածքը, իհարկե, պայմանավորված էր նաև ուրիշների կանանց նկատմամբ սեռական հակում դրսևորելու, սիրելու այր մարդու կենսահոգեբանական նախադրյալով: Բացի այդ, վերադառնալով Երևան՝ նա մեծ հոնորարի դիմաց համաձայնվում է Արցախյան պատերազմի մասին վավերագրական ֆիլմեր նկարահանել, սակայն կեղծ «ինքնակոչ հրամանատարների» մասին ֆիլմեր նկարահանելն ի վերջո նրան զզվեցնում է, և նա գիտակցաբար հեռանում է այդ գործից: Գերադասում է ռազմաճակատ գնալ, քան ազգային-ազատագրական պատերազմից փախած հրամանատարների մասին ֆիլմեր նկարահանել: Ինքնատիպորեն է ներկայանում նրա կերպարը նաև գավառական քաղաքի հյուրանոցում մարմնավաճառությամբ դրամ վաստակող, երաժշտության ուսուցչի մասնագիտություն ունեցող Արմինեի հետ հարաբերություններում: Երիտասարդ կինը նրան բացատրում է, որ ամուսինը հեռացել է իրենից ու երեխաներից, իսկ ինքը ապրուստի միջոցներ հայթայթելու համար ստիպված աշխարհի չափ հին այդ գործով է զբաղվում: Միերը, համենայն դեպս, մի գիշեր կենակցում է նրա հետ, իսկ հետագայում, երբ հանգամանքների բերումով պետք է հեռանար գյուղից, նրա հանդեպ հոգատարություն դրսևորելով, ջանքեր է գործադրում, որ Արմինեն գյուղի դպրոցում իր փոխարեն տնօրեն աշխատի, քանի որ բարձրագույն մասնագիտական կրթությամբ նա ավելի բարձր աշխատավարձ կարող էր ստանալ:

Թուրք-ադրբեջանցիներից ազատագրված գյուղում ապրելու և աշխատելու տեղափոխվածների մեջ, անշուշտ, առանձնանում է Դարբնիկը, որը Բեյրութում ապահով կյանքով ապրելու փոխարեն որոշել էր գալ հայրենիք, մասնակցել Արցախյան ազատամարտին: Նա իսկապես

ուժեղ բնավորությամբ ու հաստատակամությամբ օժտված անձնավորություն է: Նա գործարքի մեջ չի մտնում այն թալանչիների հետ, որոնք գալիս էին անտառից ապօրինի կողոպուտ անելու: Նրան դիպուկ է ներկայացրել հեղինակը. «Դարբնիկն իր անզգույշ համառությամբ կանգնեց նրանց դեմ-դիմաց և զինադադար կնքեց. Դարբնիկին վախեցնելու միակ ձևը սպանելն էր, որն անհասկանալի պատճառներով թալանչիները չարեցին, այլ շեղեցին թալանի ուղղությունը: Անտառը մեծ էր»[1]: Դարբնիկին բնութագրում է նաև այն, որ նա իսկապես չի նահանջում այդ գյուղում ապրելու դժվարություններից, ավելին. նա Բեյրութից անտառի մեջ կորած Մթնաձոր է բերում նաև իր կնոջն ու դպրոցահասակ տղային:

Վիպակի գաղափարագեղարվեստական համակարգում հեղինակի գերխնդիրներից մեկը պատերազմի նկատմամբ մարդկանց ունեցած վերաբերմունքի բացահայտումն է ու դատապարտումը որպես մարդկային ճակատագրերն աղճատող, մարդու կյանքն արժեզրկող պատուհաս, թեև այն տեղի է ունենում նաև ազգային-ազատագրական նպատակներ իրականացնելու համար: Եվ քանի որ Արցախյան առաջին պատեազմն ընթանում էր Խորհրդային Միության փլուզման հետևանքով անկախացած Հայաստանի Հանրապետության մեջ տնտեսական նախկին կառույցների քայքայման և նորերի տարերային կերպով առաջացման, սեփականաշնորհման անվան տակ ապօրինի գործունեության պայմաններում, ուստի ազատագրական պայքարն ու զինադադարի շրջանում ժողովրդի սոցիալ-տնտեսական կացությունը ահռելիորեն բարդանում է, խարխլում մարդկային բարոյական արժեհամակարգը, առաջ բերում աղքատություն, հացի խնդիր լուծելու պատճառով կանանց մղում մարմնավաճառության, պետական կառավարման համակարգում առաջ է բերում աշխատանքների կազմակերպման խառնաշփոթ: Ահա այս համապատկերի տիրույթում են վիպակի հերոսները գործում և փորձում ինքնահաստատվել մասնավորապես ազատագրված բնակավայրում: Եվ այս ամենի պատճառով գլխավոր կերպարի մտքի և տեղի ունեցող իրադարձությունների դաշտում ծնվում են խորհրդածություններ նաև այն մասին, որ մեր ժողովրդի պատմական հնագույն ազգ լինելու վկայագիրը պեղվում, հայտնաբերվում է նաև պատահական ականի պայթյունից բացված դամբարանադաշտի գտածոների շնորհիվ /«միայն իմ ազգն է ստիպված՝ իր երկրի անձնագիրը հողի տակ փնտրել: Հայաստանը բաց երկնքի տակ չէ թանգարան, այլ՝ հողի»[2]/: Եվ քանի որ պատերազմը չէր ավարտվել, այլ լոկ զինադադարի շրջան էր, ուստի մասնակի

1 Նույն տեղում, էջ 57:
2 Նույն տեղում, էջ 99:

զինված բախումները չէին դադարում նաև վիպակի կերպարների ապրած տարածաշրջանում և շարունակվում էր յուրովի վտանգի տակ մնալ յուրաքանչյուրի կյանքը, որը կարող էր հեշտությամբ գնդակի զոհ դառնալ: Պատերազմական վիճակը հաճախ արժեզրկում է անհատի կյանքը, որը կարող է կործանվել պատահական կրակոցից կամ ռմբահարվածից: Այս մասին է Միերի գլխավոր մտհոգություններից մեկը. «Ինչո՞ւ են այդ թանկարժեք ցուցանմուշները ավելի թանկ, քան դեռ չջարդված գանգերը: Ասե՞նք Դարբնիկինը»[1]:

Հետաքրքիր է ստացվել և խորիմաստ կերպով է կերտվել նաև ազատագրված գյուղի նախկին բնակիչ ադրբեջանցի Վագիֆի կերպարը: Հեղինակն համենայն դեպս նրա կերպարով ներկայացրել է ժամանակակից այն ադրբեջանցի-թուրքին, որն ապրել է այդ գյուղում իր ընտանիքով և այդտեղից հեռացել հայկական ռազմական ուժերի կողմից ադրբեջանական բանակի վրա ավելի մեծ ճնշում գործադրելու շնորհիվ: Երբ հայկական բանակն ազատագրել էր Արցախի այդ տարածքը, դեռևս մարտերի ընթացքում ադրբեջանցի բնակիչները փախել էին գյուղից: Բայց ահա, երբ գյուղի գերեզմանոցի շիրմաթմբերից մի քանիսի վրա հայտնվում են ծաղիկներ, պարզվում է, որ գյուղի բնակիչներից մեկը թաքնվել էր անտառում, որովհետև գնալու և պատսպարվելու տեղ չէր ունեցել: Այդ մարդը Վագիֆն էր, նա, ինչպես ինքն է ներկայանում, ոչ մի մոտիկ հարազատ չունի, միակ հարազատները՝ կինն ու երեխան, մահացել են թունավոր օձի խայթոցից և նույն օրը երկուսն էլ թաղվել են այդտեղ: Նա չէր ցանկացել հեռանել այդ գյուղից, ինչպես ինքն է բացատրում, իր միակ հարազատների գերեզմաններին գեթ մոտ լինելու պատճառով: Հեղինակն այդպիսով, անշուշտ, ձգտել է Վագիֆի կերպարի միջոցով ցույց տալ Արցախյան պատերազմի հետևանքով, հարևան, սակայն թշնամի դարձած ազգի ներկայացուցչի մեջ մարդկային զգացողությունների, ընտանիքի անդամների՝ կնոջ, զավակի, ծնողների հետ կապվածության դրսևորումների արտահայտությունը: Ըստ էության ընդգծված կերպով տեսանելի էր դառնում թշնամի ադրբեջանցու մեջ մարդկային, հարազատական զգացմունքներով ընտանիքի անդամների հետ կապված լինելու կենսաբանական, հոգեբանական անխուսափելիորեն դրսևորվող ու յուրովի պարտադրող, արքետիպային մղումների թելադրանքով պայմանավորված ինտուիտիվ պահանջը: Այդ պահանջը այնքան ուժեղ էր, որ ստիպել էր նրան հաղթահարել հայերի կողմից հայտնաբերվելու, պատժվելու կամ գերեվարվելու սպառնալից վտանգը: «Նա,- գրում է հեղինակը,- մի քանի անգամ երդվեց Ալլահով և ասաց, թե ավելի լավ է սպանենք,

1 Նույն տեղում, էջ 99:

քան թե վտարենք գյուղից, թույլ չտանք, որ կնոջն ու որդուն մոտիկ ապրի: Նա երդվում էր, որ պատրաստ է ցանկացած աշխատանքի, պատրաստ է փոխել անունը, անգամ ազգությունը: Երդվեց, որ պատրաստ է հարկ եղած դեպքում կռվել մեր կողքին: Բացատրեց, որ տեղանքը գիտի շատ լավ և օգտակար կլինի մեզ: Նրա այս պատրաստակամությունն, անշուշտ, կասկածելի էր, բայց շարունակում էր Ալլահով երդվել, որ չունի ավելի հարազատ, թանկ բան աշխարհում, քան կնոջ և որդու շիրիմները: Դարբնիկը որոշեց նրան թողնել գյուղում»[1]:

Արժի զուգահեռ անցկացնել Դարբնիկի և Վագիֆի կերպարների հոգեկերտվածքի և արարքների միջև: Վագիֆը ինչպես նկատեցինք բավականին համառ էր և նպատակամետ, ըստ իր վարկածի, ձգտում էր իր միակ հարազատների շիրիմներին գեթ մոտ լինել, թեկուզև կյանքը վտանգի ենթարկելու, անգամ գերի ընկնելու գնով: Նրա այդպիսի հաստատակամությունը անկախ իր վարքագծի մոտիվից /այսինքն՝ կարելի էր կասկածել, որ նա իսկապես անկեղծ էր իր հարազատների մահվան պատմությունը ներկայացնելիս. միգուցե այդ պատմությունը լրտեսելու նպատակով հորինված լեգենդ էր սոսկ/ վկայում էր այն մասին, որ ամեն դեպքում գործ ունենք համեմատաբար ուժեղ բնավորությամբ մարդու հետ: Հետևաբար հեղինակը մղում է մտածել այն մասին, որ հակառակորդին չի կարելի թերագնահատել, մանավանդ զինադադարի ընթացքում: /Եվ այսպիսի հիշեցումը իր հերթին արդիական նշանակություն ունի, քանի որ յուրօրինակ զինադադարի պայմաններում ենք ապրում այսօր էլ/:

Համառության և նպատակասլացության, հոգեկերտվածքի ուժեղ կողմերով է առանձնանում վիպակի երկրորդ գլխավոր կերպար Դարբնիկը, որը նույնպես հիմնականում Միերի մեկնաբանություններով է ներկայանում ընթերցողին: Նա հեղինակի կողմից ստեղծված հաստատակամ ու հայրենասեր հայ մարդու ակնառու կերպով առանձնացող, հայրենիքի հանդեպ պատասխանատվության ու անմնացորդ նվիրաբերման գաղափարը մարմնավորող հերոս է: Նրա կերպարը ևս, այս ամենով հանդերձ, չի իդեալականացվել, պոռնիկ կնոջ հետ կենակցելու մասին հիշատակումով նա ավելի հողեղեն, կենսահոգեբանական կերտվածքով, իրատեսորեն պատկերված բնավորություն է ներկայանում և ոչ միայն այդ պատճառով: Իբրև գյուղապետ նրա դերակատարությունը գյուղում ապրողների վրա ավելի նշանակալի ու ազդեցիկ էր: «Գյուղացիները, - պատմում է Միերը, - տեսնում էին, որ ի տարբերություն ինձ Դարբնիկն անվերադարձ է կապվել բնակավայրին, բնությանը՝ հողին,

1 Նույն տեղում, էջ 62:

անտառին, ձորին, գետակին, և չէր սեթևեթում, երբ ասում էր, որ կփոխի ազգությունը, հավատը և կշարունակի ապրել այստեղ, եթե գյուղը մի օր նորից թշնամու ձեռքն անցնի»[1]: Նրա նման ընկալումներն ու զգացողությունները հաստատվում են նաև հետևյալ կերպ: Տեղանքի, բնության գրավչությունն ու պատերազմի առաջ բերած մեղքերն ու հետքերը ձյան շերտով ծածկելու ապաքինող նշանակությունը մեկնաբանվում է քնարականության հասնող, վիպակի մեջ քիչ հանդիպող այսպիսի զեղումով. «Ինչո՞ւ է դրախտը պատկերացվում որպես կանաչազարդ ու մշտապես տաք մի վայր: Ձյունն արդեն լուսավորել էր Մթնաձորի խավարը: Ձյունը եկել ու ծածկել էր արյունը, բոլոր դավերի հետքերը: Ծածկել էր մեր բոլոր մեղքերը, ու, թեպետ, մարդկանց կամ գազանների ոտնահետքերը պղծում են նրա կուսականությունը, այնուհանդերձ համատարած ճերմակը, մանավանդ հեռուն նայելիս, մաքրում էր խոստովանության պես: Ձյունը մաքրում էր ինչպես աղոթք, ինչպես անբառ պատարագ»[2]: Տեղանքի կուսական բնության /թերևս այսպիսի ընկալումից էլ առաջացել է Կովսական կամ Կուսական պատմաաշխարհագրական տեղանունը/ այսպիսի ընկալման միջոցով բնութագրվում է Դարբնիկի հոգեկերտվածքի մեջ բնությամբ մաքրագործվելու, հոգեկան հավասարակշռությունն ու ներդաշնակությունը պահպանելու մարդու բնական, ներքին պահանջը: Սակայն նշենք, որ նրա համար աշխարհագրական միջավայրը սերտորեն ձուլված է հայրենիքի գաղափարի հետ. այդ պատճառով էլ նա, գյուղը լքողներին մեղադրելով, այսպիսի դիտողություն էր անում. «-Այստեղ ամառանոց չէ, հայրենիք է,- գոչում էր գյուղապետը,- հովը կվայելեք, ձմեռվան ցախ ու ցուխը կըպատրաստեք, վարազի ղավուրման, պտուղի հյութն ու անուշն կշինեք, կառնեք՝ կերթաք: Ալ ասանկ չըլլայ»[3]: Եթե հայրենիքն իր բնական բարիքներով կերակրում է ու պահում իր զավակներին, ուրեմն նրա բնակիչ-որդիներն էլ պետք է հոգ տանեն իրենց մայր-հայրենիքի մասին, երբեք չլքեն նրան կամ գեթ անհրաժեշտության պահին նրան սատար կանգնեն՝ անկեղծորեն ու անմնացորդ նվիրումով: Այդպես Դարբնիկն ինքն էր վարվել՝ Բեյրութի իր ապահով ու բարեկեցիկ կենցաղից հրաժարվելով, ընտանիքով հայտնվելով կիսավեր, պատերազմով ազատագրված գոտում:

Այսպիսի ներաշխարհ ու պատկերացումներ ունեցող, վճռական արարքներ կատարելու ընդունակ Դարբնիկի հետ համեմատելիս Վագիֆի մարդկային տեսակը որոշ շփման եզրեր ունի. չէ՞ որ նա հաստատա-

1 Նույն տեղում, էջ 98:
2 Նույն տեղում:
3 Նույն տեղում, էջ 97:

կամություն հանդես բերելով, կյանքը վտանգելով ցանկացել էր չլքել գյուղը մեռած հարազատների հետ ունեցած հոգևոր կապի պատճառով, թեև կասկածելու տեղիք հեղինակը տալիս էր: Դարբնիկն, համենայն դեպս, Վագիֆին գերազանցում էր իր քրիստոնեական անթաքույց մարդասիրությամբ, արդարամտությամբ, ներքին բարեմտության առաջին հայացքից չերևացող պաշարներով: Իսկ նրա ներաշխարհի այդ կողմերը ակներև են դառնում գաղտնի կերպով գյուղի գերեզմանոցում հայտնված այլ ադրբեջանցիների հետ Վագիֆի կապը պարզելու և նրան կախաղան հանել տալու միջոցով պատժելու դրվագում: Վագիֆը թեև Դարբնիկի կողմից դաժանորեն ծեծվում է, սակայն անդրդվելի է մնում, ժխտում է իր և գյուղի գերեզմանոցում շիրմաթմբերին նոր ծաղիկներ դնողների հետ առնչությունը: Երբ արդեն մետաղալարը նրա պարանոցին էր, նա ոչ թե սարսափած էր, կամ խուճապահար, այլ. «Ամենացայտունն այդ պահին նրա դեմքի վրա խորը ատելությունն էր բոլորիս նկատմամբ»[1]: Երբ թվում է, թե Վագիֆի ճակատագիրը վճռված է, և նա կախաղան հանվելով է մեռնելու, վերջին պահին բոլոր ներկաների համար անսպասելիորեն Դարբնիկը որոշում է Վագիֆին ազատ արձակել: «Ըսե այս մարդուն,-ասում է նա թարգմանչին,- որ ես իրեն ազատ կարձակեմ: Թող երթա, ուր որ ինքը կ,ուզե: Թող փաստե, որ այս գյուղն իրենն է: Թող ինքն ալ փաստե, ես ալ»[2]: Այդպես արտահայտելով իր բարոյակահոգեբանական բարձր պահվածքը Վագիֆի հանդեպ՝ Դարբնիկն իր արդարամտությունից դրդված չէր կարող մահապատժի ենթարկել թեկուզև գերության մեջ գտնվող ադրբեջանցուն՝ առանց նրա մեղքը անառարկելի կերպով հաստատելու:

Դարբնիկի այդ արարքը, այնուամենայնիվ, միանշանակ չի ընկալվում գյուղի իր ընկերների կողմից: Արցախյան պատերազմի ձգձգվածությունը, զինադադարի շրջանը ունեին իրենց բազմաբնույթ խնդիրների շրջանակներն ու փաստերը, որոնց հետ հարկավոր էր հաշվի նստել, գտնել արդարամտության այլ չափումներ ևս: «-Է, որ ի՞նչ,- ինձ մոտենալով բողոքեց վարչապետ Տիգրանը,- գոնե կփոխանակեինք: Հորքուրիս թոռը երեք տարի է դրանց մոտ գերի է»[3]: Այս ամենով հանդերձ ոչ շատ ծավալուն վիպակի հերոսների ճակատագրերով հեղինակը ըստ էության ներկայացրել է Արցախյան պատերազմի բովով անցած և զինադադարի շրջանի բարդ իրադրության մեջ հայտնված հայ մարդկանց բարոյահոգեբանական կացությունը և ընդհանարապես նման իրադրության մեջ

1 Նույն տեղում, էջ 85:
2 Նույն տեղում:
3 Նույն տեղում:

հայտնված մարդ անհատի կեցության, գիտակցության ու ենթագիտակցության մղումներով ծնված ապրումների ծանր ելևէջները:

Հեղինակը «Զինադադար» խորհրդանշական վերնագրով հիշեցնում է, որ Արցախյան պատերազմը դեռ չի ավարտվել, և այն յուրովի ազդարարում է սթափ մնալ, չկորցնել զգոնությունը: Անշուշտ, պատմական ոչ մի իրադարձություն, ինչքան էլ պսակված լինի հաղթանակներով, չի կարող զերծ մնալ մարդկանց հարաբերություններում դրսևորվող անօրինական ու եսակենտրոն գործողություններից: Այդպիսի իրավիճակի մեջ են հայտնվում նաև այս վիպակի հերոսները և անհրժեշտ է, նրանց մասին կարդալով, նաև հասկանալ նրանց, ըմբռնումով մոտենալ նրանց ճակատագրի վայրիվերումներին, գնահատել այդպիսի պայմաններում նրանց արարքներում դրսևորված մարդասիրական վերաբերմունքը յուրայինների և թշնամու նկատմամբ:

Բարդ ու հակասական է պատերազմի մասնակցի հոգեվիճակը: Ճիշտ է նկատվել, որ իսկական զինվորը պատերազմի դաշտում է մնում, նա հաճախ կորցնում է ամեն ինչ՝ ընտանիք, անցյալ, մասնագիտություն, կյանք: Հերոսների, մասնավորապես Միերի ճակատագրով, հեղինակը բացահայտել է նաև պատերազմի կործանարար էությունը, և դերը մասնակիցների կյանքում: Նույնիսկ թշնամուն հաղթելու պարագայում պատերազմի ավերիչ դերակատարությունը չի մոռացվում: Միերը ջանքեր է գործադրում վերականգնել ազատագրված գյուղի դպրոցը, սակայն չի կարողանում իր ընտանիքի հետ կապը ամրապնդել, ջերմացնել հարաբերությունները կնոջ հետ: Այս մենակ մնացած մարդու կյանքն ու առողջությունը օր օրի խեղվում են (կլինիկական մահ է տանում, հայտնաբերվում է շաքարախտ):

Վիպակն իր ամբողջության մեջ, կերպարների մարմնական ու հոգեկան վիճակով, արարքներով ու մտածողությամբ դատապարտում է պատերազմը. վերջինս ազգային-ազատագրական նպատակներ ունենալու դեպքում և հաղթանակ բերելով անգամ արճճի պես ծանր, անհաղթահարելի նստվածք է թողնում մասնակիցների հոգում և ճակատագրում: Այս իմաստով ուշագրավ է գրականագետ Վ.Գրիգորյանի դիտարկումը Լ. Խեչոյանի «Սև գիրք, ծանր բզեզ» երկի կապակցությամբ, որտեղ ընդգծվում է, որ վեպում «խոսքը հաղթանակի մասին չէ, այլ մարդու պարտության»[1], իսկ քիչ հետո հավելում նաև. «Կյանքի կործանումն արժեզրկում է կռվի իմաստը»[2]:

1 Գրիգորյան Վ.,Լևոն Խեչոյանի ստեղծագործությունը, Երևան, «Արմավ» հրատ., 2019, էջ 240:

2 Նույն տեղում:

Բայց և այնպես, կան մարդիկ էլ, օրինակ՝ Դարբնիկը, որոնք կարողանում են դիմակայել փորձություններին, չկորցնելով հոգու արիությունը: Չէ՞ որ նրա նմանների շնորհիվ էր ձեռք բերվել հաղթանակը, որի մասին վիպակում շատ քիչ է խոսվում: Ամենուր պատերազմի առաջ բերած ավերածություններն էին, նորանկախ Հայաստանի Հանրապետության հանրային կյանքում, տնտեսության մեջ ու ամենատարբեր բնագավառներում բազում ապօրինություններ էին կատարվում ու բարձիթողի վիճակ էր հաստատվել հասարակ ժողովրդի նաև մտավորականության լայն շրջանակներում: Միերն անխուսափելիորեն մտորում է նաև իր երևանյան համակուրսեցիների մասին, որոնք, առաջին մասնագիտությամբ ճարտարապետ լինելով, պատերազմի պատճառով չէին կարողացել իրենց մասնագիտությամբ աշխատել: Հաղթանակը շատ թանկ էր արժեցել իր սերունդի համար, և դա թերևս անխուսափելի էր: «Ո՞ւր կորսվեց կառուցելու մեր երազանքը,- դառնությամբ մտածում է նա,- ո՞վ խլեց մեզնից հայրենիք նախագծելու տենչը: Պատերա՞զմը, որում հաղթեց մեր սերունդը, բայց պարտվեց՝ որպես սերունդ: Գուցե դա՞ էր հաղթանակի գինը: Մի՞թե իրարից այդքան տարբեր ու հեռու են սոցիալիզմ, կապիտալիզմ փուչ բաները: Այնքան փուչ ու դատարկ, իրարից այնքան հեռու, որ սերունդ պիտի կորչեր արանքում, գահավիժեր իրար բաժանող անդունդը»[1]:

Միերը փորձում է կապ ստեղծել անցյալի հայ ազատագրական պայքարի և ներկա պատերազմի միջև իր երազի միջոցով, ուր նա գրկի երեխային կերակրող իր կնոջը՝ Մարիամին, պաշտպանում է քրդերից: Սակայն այդ թեման լիարժեք զարգացում չի ստացել: Իսկ բուն դիպաշարի ընթացքում Միերի, նրա կնոջ հետ հարաբերությունների անորոշությունը, Միերի ինքնահաստատվել չկարողանալու հանգամանքը, կնոջ՝ Միերի ծանոթների շնորհիվ բարեկեցիկ կյանքով ապրելու հնարավորությունը, նրանց միջև առաջացած սառնությունը երկրում պատերազմի հետևանքով ստեղծված կեցության վայրիվերումների արդյունք էին: Այդ ամենի հետևանքով երկը ընթերցողի համար նաև անավարտ է թվում, թեև ժամանակի հասարակական կյանքի տրամաբանության մեջ այն շարունակվող իրավիճակի գեղարվեստական արտահայտություն է դառնում:

Ինչևէ. Հ. Երանյանի «Զինադադար» վիպակը Արցախյան առաջին պատերազմից հետո, զինադադարի շրջանում ստեղծված հայաստանյան իրականության որոշ կողմեր գեղարվեստորեն պատկերող

1 Երանյան Հ., Զինադադար, պատմվածքներ, վիպակ, Երևան, ՀԳՄ հրատ., 2005, էջ 116:

լավագույն արձակ երկերից մեկն է արդի հայ գրականության մեջ: Հեղինակը,կարծում ենք, գտել է մեր նոր իրականության, անկախության տարիների կյանքը պատկերելու իր եղանակը, գեղարվեստական մտածողության ինքնատիպ աշխարհը: Վիպակը նկատել և նրա վերաբերյալ, մասնագիտական մոտեցում հանդես բերելով, դրվատանքով են արտահայտվել գրականագետներ Ա. Թոփչյանը[1], Վ. Փիլոյանը[2]: Բայց և այնպես մենք կարծում ենք, որ վիպակի բովանդակությունը հարուստ է յուրակերպ պատկերված թեմաներով, միջավայրերով ու կերպարներով, որոնք անհրաժեշտ է մեկնաբանել և արժևորել առավել հանգամանորեն: Նման մոտեցման պահանջն էլ մեզ մղեց գրելու այս ուսումնասիրությունն՝ իբրև գրականագիտական հոդված:

Բ.գ.դ. Գագիկ Խաչիկյան - գիտական հետաքրքրությունների ոլորտը՝ հայ նոր և նորագույն գրականություն: Գիտական մամուլում հրատարակել է տասնյակ հոդվածներ, մենագրություն:

Բ.գ.թ. Անահիտ Նահապետյան - գիտական հետաքրքրությունների ոլորտը՝ հայ նոր և նորագույն գրականություն: Գիտական մամուլում հրատարակել է հոդվածներ:

GAGIK KHACHIKYAN, ANAHIT NAHAPETYAN - TIME AND PEOPLE IN THE ARTISTIC SYSTEM OF HOVHANNES YERANYAN'S NOVEL ''THE CEASEFIRE".

The article analyzes the novel "The Ceasefire" by modern prose writer Hovhannes Yeranyan. This work realistically depicts some aspects of the cultural life of Moscow, the capital of the Russian Federation during the first years of independence (the 1990s) from the point of view of an Armenian student, and especially the situation in the Republic of Armenia. In the first years of the collapse of the Soviet Union, the reality of Armenia is revealed through the eyes of the main character Mher Yepremyan, who acts as a narrator, and through direct contact and sharing life experiences with people.

With transparent artistic images are presented moral values in everyday morals, distorted human relations, and moral values in cultural life in Moscow, about which is told through recollection, and the real events take place in the newly independent Republic of Armenia and Artsakh. Through the main character, the author presented the artistic environment in the context, especially in a part of the liberated territory of

1 Գրականագետի կարծիքը տես հետևյալ գրքում՝ Հովհաննես Երանյան,Այլ ոտնահետքեր, Երևան, Անտարես, 2013, էջ 288:

2 Փիլոյան Վ., Ակնարկներ արդի հայ գրականության, ուսումնական ձեռնարկ,Երևան, Լուսակն, 2018, 144-149:

Artsakh, which was known as the Kovsakan period of historical Armenia, some truth, typical aspects of the ceasefire period and the situation in the country.

The images of people liberated from the Azerbaijani-Turks in a village called Mtnadzor are remarkable. Mher and Darbnik stand out among them, as they both took part in the Armenian-Azerbaijani battles, gaining a new life experience and life philosophy in the liberation struggle. War motivates to redefine the past, new vital relationships with people, where unpredictable changes take place in their destinies. The mutable condition of the economic and political life of the time and the feelings of instability of the ceasefire are presented through the plight of the heroes of the novel and the upheavals of destinies.

The author's ideological and artistic achievements are obvious in the novel. They are visible due to the thematic, unique ideological observations expressed in the content of the novel. Not only the use of vital themes are remarkable, but also the peculiarities of the artistic depiction of the revelations of the mentality of the characters and the revelations of the mental states in the post-war period are remarkable. "The Ceasefire" shows the creative, aesthetic point of view, which guided the author. It was a principled approach for him to portray the reality of the Republic of Armenia, which was already independent in the 1990s, as impartially as possible, often with his interpretation of the main character, Mher's existential feelings, and life vision. Mher, acting as a central character, tells the events of the novel and introduces the other characters. The realities portrayed in the realm of the novel thanks to such a function, made him and other people more credible to the reader. The described events and characters become more convincing because the narrator lives and acts in the same environment, being in a certain relationship and in direct contact with them. In any case, such a view has been expressed within the framework of the aesthetic principle of realistic depiction of reality. The geographical environment described to the reader, a part of the liberated territory of Artsakh, Kovsakan, where the events are taking place, and the images of people during the ceasefire period were a new habitat that were included in our modern literature by the author of the novel.

The characters of Mher and Darbnik stand out among the characters of the novel. Others, in their turn, have a role in recognizing the 1990s and the nature of human characters and mentalities. Their mutable condition, the uncertainty about the future, are opposed to Mher and to the relative stability of his family, though there was a certain tension, coldness between him and his family members, and again war quilty.

Remarkably, Mher's character has not been idealized. After returning to his homeland, while working as a cameraman, he was forced to make documentaries about some cowardly high-ranking military men who escaped from the front, glorifying them in exchange for a high salary. It is typical for Mher's human description that in the end,

he gets tired of such a disgraceful job, he prefers to go to the front than to continue such shootings. However, it is undeniable that the ability of the Armenian people, like Mher and Darbnik, to show their struggle in the victory over the enemy in the first Artsakh war was significant. In the novel, they are people with strong character who had a certain contribution to the victory in the first Artsakh war. The war struck but did not break them. Being away from his wife Mher had contact with a woman of low moral character and it had contracted an illness. The latter was forced to do so (being a highly educated music teacher) because the burden of the family on her shoulders could not be relieved otherwise. The character of Darbnik is remarkable from another point of view. He is from a Armenian Diaspora and finally decides to live with his family in the liberated area. A remarkable parallel can be drawn between the Azeri-Turkish Vagif, who was taken a prisoner in the village, and Darbnik, who thinks that we should not underestimate the enemy, so as not to weaken the vigilance of our soldiers both during the battle and the ceasefire. In any case, Darbnik is a unique character of an Armenian volunteer from the Diaspora of that period, insofar as he emphasized the desire and principle of protecting the liberated territory of the homeland not only from the Azeri-Turks but also from Armenian thieves and robbers.

Of course, there are some shortcomings in the novel. These mainly refer to the fact that some topics are not fully developed within the scope of the plot. The fate of the main character Mher remains uncertain. The fact that the spirit of the victory of the Armenian soldiers in the Armenian-Azerbaijani war in the 1990s faded due to the economic chaos in the republic during these years and the difficult living conditions of the people becomes obvious in the epic context.

Undoubtedly, this story plays a special role in the work of L. Khechoyan " Black Book, Weighty Bug ", as well as in the works of other writers depicting the above-mentioned period. It was observed and partially evaluated by literary critics A. Topchyan and V. Piloyan. In our opinion, the novel deserves to be analyzed with wider discoveries of themes, ideas, and characters.

Keywords: Hovhannes Yeranyan, Levon Khechoyan, the first years of independence, ceasefire, realistic depiction, the liberated territory of Artsakh, narrator, modern Armenian prose, novel.

ГАГИК ХАЧИКЯН - АНАИТ НААПЕТЯН: ВРЕМЯ И ЛЮДИ В ХУДОЖЕСТВЕННОЙ СИСТЕМЕ ПОВЕСТИ ОГАНЕСА ЕРАНЯНА «ПЕРЕМИРИЕ»

- В статье анализируется повесть современного прозаика Оганеса Ераняна «Перемирие». В повести глазами армянского студента реалистически отражены

некоторые аспекты культурной жизни столицы Российской Федерации Москвы в 1990-е годы и особенно ситуация в Армении в первые годы после получения независимости. Распад Советского Союза, первые годы независимости, ситуация в Армении описаны от имени главного героя, Мгера Епремяна, выступающего в роли повествователя-наратора, делящегося с читателем своими переживаниями и опытом непосредственного общения с людьми.

При помощи проникновенных художественных образов в форме воспоминаний представлены извращенные будничные отношения и моральные ценности в Москве, в то время, как истинные события происходят в Армении, получившей независимость, и в Арцахе. Посредством главного героя в контексте художественной среды представлено реалистическое изображение ряда аспектов общественной жизни после установления перемирия в одном из районов Арцаха, называемом Ковсакан.

Примечательны образы людей, нашедших пристанище в селении, условно названном Мтнадзор, которое было недавно освобождено от азербайджанцев-турок. Среди них выделяются Мгер и Дарбник, так как оба участвовали в армяно-азербайджанских боях, приобретя жизненный опыт и жизненную философию в освободительной борьбе. Война заставляет по-новому осмысливать пройденный путь, взаимоотношения между людьми, где происходят коренные перемены. Чувство непостоянства экономической и политической жизни, шаткости достигнутого перемирия представлены посредством перепадов в жизни и судьбах героев.

В повести прослеживается идеологический и художественный рост автора. Он ощущается в специфическом отражении тематических и идеологических наблюдений героя. Примечательны не только обыденные темы, затронутые в произведении, но и особенности художественного изображения психического состояния героев, обусловленного жизнью в послевоенный период. В повести «Перемирие» видно то творческое, художественное мировоззрение, которым руководствовался автор. Для него являлось делом принципа по возможности более реалистично изобразить действительность 1990-х годов в получившей независимость Республике Армения, преломленную через призму экзистенциальных ощущений и жизненного кредо главного героя Мгера. Мгер и рассказывает о событиях в повести, знакомя читателя с другими героями, и сам выступает в качестве главного героя. Представленные таким образом события, остальные персонажи повести, а также он сам предстают в данном аспекте более реальными. Описанные события и лица обретают большую убедительность благодаря тому, что рассказчик сам живет в той же обстановке, среде, что и другие герои, находясь в определенных отношениях с ними,

непосредственно общаясь со всеми. Во всяком случае, подобное мировоззрение оправдано принципом реалистичного отображения действительности. Для читателя описанная в повести географическая местность, часть освобожденного арцахского поселения Ковсакана, происходящие там события и образы людей, живущих здесь в период перемирия, явилась новым поселением, изображенным автором произведения.

Среди героев повести особенно выделяются образы Мгера и Дарбника. Другие персонажи также играют определенную роль с точки зрения событий 1990-х годов, в судьбах людей, в осознании фактов, повлиявших на их психическое состояние. Шаткость их положения, неуверенность в будущем противопоставлены относительной стабильности у Мгера и его семьи, несмотря на определенную холодность и натянутость между ним и членами его семьи, причиной которой опять же является война. Примечательно, что образ Мгера не идеализируется. Вернувшись на родину, он работает оператором – за хорошую плату вынужден снимать документальные фильмы о трусливых высокопоставленных офицерах, позорно сбежавших с поля боя, представляя их героями. Образу Мгера присуще бунтарство и в конце концов он устает от этого позорного занятия и предпочитает отправиться на фронт защищать родину, чем продолжать съемки подобных фильмов. Тем не менее неопровержимо то, что во время первой войны за Арцах вклад людей, подобных Мгеру и Дарбнику в дело победы трудно переоценить. В повести они предстают перед читателем как люди с твердой силой воли и стремлением к победе над врагом, решившие судьбу Арцаха во время войны. Война побила их, но не сломила. Будучи вдали от семьи, Мгер заразился, переспав с проституткой (женщиной с высшим образованием, учительницей музыки), которая занималась проституцией, чтобы прокормить семью.

В совершенно ином ракурсе примечателен образ Дарбника. Он – представитель армянской диаспоры, который под конец решает переселиться на родину и жить в освобожденной им территории. Можно провести интересную параллель между ним и попавшим в плен азербайджанцем Вагифом, подчеркивая важность того, что врага нельзя недооценивать, чтобы не расслабляться, не терять бдительность как во время войны, так и в период перемирия. Во всяком случае, образ Дарбника является своего рода представителем добровольца из диаспоры, приехавшего любой ценой защищать родину не только от азербайджанцев-турок, но и от местных грабителей и воров, отстаивая свободу и принципиальность.

В повести, конечно, есть некоторые недостатки. Это касается недостаточного освещения некоторых тем в фабуле произведения. Неопределенной остается судьба главного героя, повествователя-рассказчика Мгера. В сюжетной линии

проявляется тот факт, будто радость победы армянских воинов в армяно-азербайджанской войне омрачена хаосом, царившим в 1990-е годы, равно как и бытовыми проблемами.

Мы считаем, что данная повесть вполне может быть поставлена в один ряд с романом Л. Хечояна «Черная книга, тяжелый жук» и другими произведениями, описывающими указанный выше период. Эту повесть заметили и частично оценили такие литературоведы, как А. Топчян, В. Пилоян. Мы считаем, что повесть заслуживает более глубокого анализа тем и идей, событий и образов.

Ключевые слова: Оганес Еранян, Левон Хечоян, первые годы независимости, перемирие, реалистическое изображение, освобожденная территория Арцаха, повествователь-рассказчик, современная армянская проза, повесть.

Reference

1.Eranyan H.,Zinadadar, patmvacqner, vipak,Erevan,HGM hrat, 2005 /in Armenian/.

2. Eranyan H., Ail votnahetqer, Erevan, Antares, 2013 /in Armenian/.

3.Hajastani harakic shrjanneri texanunneri bacatrakan bararan,Erevan,1988 /in Armenian/.

4.Piloyan V., Aknarkner ardi haj grakanutyan,usumnakan dzernark, **Erevan, Lusakn,** /in Armenian/.

5. Grigoryan V., Lewon Khechoyani stexcagorcutjune, **Erevan,** «Armaw» hrat.

DOI: 10.54503/1829-0116-2022.1-147